«Արմենիա» Հեռուստաընկերություն, 08.12.2015,
http://www.armeniatv.am/hy/news/59074

# Կոմբինացված չորանոց՝ made in Armenia

Հայ գիտնականներն ու գործարարները ներկայացնում են կոմբինացված չորանոց: Կամբինացված չորանոցը էներգախնայող է, ավտոմատացված և էկոլոգիապես անվտանգ: Այժմ պատրաստ է միայն փորձնական և փոքր ծավալով տարբերակը, բայց պատվերի դեպքում հնարավոր է պատրաստել մինչև 1 տոննա տարողությամբ չորանոց:

Հայ գիտնականներն ու գործարարները ներկայացնում են նոր տիպի՝ կոմբինացված չորանոց: Այն աշխատում է միաժամանակ երեք տեսակի էներգիայով: Չորանոցն էներգախնայող է: Աշխատում է օրը 24 ժամ, որից 12 ժամը՝ արևի էներգիայով: Հետո աշխատում է էլեկտրական հոսանքով: Կարող է օգտագործել նաև ինֆրակարմիր ճառագայթների էներգիան: Մեկ չորանոցում կարելի է չորացնել մինչև 300 կգ միրգ: Չորացնում է միրգ, դեղաբույս, լավաշ և փայտ: Սակայն գյուտարարը խոհուրդ է տալիս չորացնել միայն մեկ տեսակի ապրանք:

Կամբինացված չորանոցը էներգախնայող է, ավտոմատացված և էկոլոգիապես անվտանգ: Այժմ պատրաստ է միայն փորձնական և փոքր ծավալով տարբերակը, բայց պատվերի դեպքում հնարավոր է պատրաստել մինչև 1 տոննա տարողությամբ չորանոց: